

ԻՆՉՊԻՍԻՐ՝ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄՆ Է ՎՏԱՆԳԱՎՈՐ: ԻՆՉՈՒՐ՝ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԼԱՍՏՄԱՍՍԵ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՈՒՄԸ

Պլաստմասսե փաթեթավորմանը պետք է մոտենալ ծայրահեղ զգուշությամբ:

Կարևոր է հիշել, որ ցանկացած, նույնիսկ սննդի համար նախատեսված, անվտանգ թվացող պլաստմասսե փաթեթավորումը 40°C-ից բարձր ջերմաստիճանում տաքացնելիս սկսում է արտազատել բիսֆենոլ Ա՝ հզոր թույն մարդու օրգանիզմի համար:

Հնարավորինս խուսափեք միկրոալիքային վառարանում պլաստմասսե տարավ սննդամթերքի տաքացումից և երբեք մի պահեք սնունդը դրա մեջ:

Պլաստմասսե տարան կամ շիշն ընտրելիս ուշադրություն դարձրեք դրանց մակնշմանը: Յուրաքանչյուր ապրանքի վրա պետք է լինի նշան, որը ցույց է տալիս, թե ինչ նյութից է պատրաստված տվյալ ապրանքը: Քննարկենք պլաստմասսե արտադրանքների մակնշումները:

1. Պոլիէթիլեն տերեֆթալատ (ՊԷՏ / ՍԵՏ / PETE կամ PET)

Մակնշվում է 1 թվանշանով:

Պատկանում է ամենատարածված պլաստմասսայի տեսակներին:

Օգտագործվում է՝

- հիմնականում ըմպելիքների համար նախատեսված մեկանգամյա օգտագործման տարաների արտադրությունում,
- ոչ ոգելից ըմպելիքների, գազավորված ջրերի, յուղերի և շամպունների շշերի, ինչպես նաև մեկանգամյա օգտագործման տարաների արտադրությունում:



Վտանգները. Այս պլաստմասսայից պատրաստված շշերի կրկնակի օգտագործումն արգելվում է, քանի որ այդ դեպքում դրանք արտազատում են թունավոր նյութեր, օրինակ՝ ֆթալատ:

Առողջական խնդիրներ. Ֆթալատը կարող է կուտակվել մարդու օրգանիզմում՝ վնասելով հորմոնային համակարգը, թոքերը, լյարդը: Նաև կարող է ներթափանցել ընկերքի միջով՝ վնասելով պտղին:

Երբ այս պլաստմասսան կրկնօգտագործման ժամանակ շփվում է սննդի կամ ջրի հետ, բոլոր թույները ներթափանցում են դրանց մեջ և, համապատասխանաբար, այն մարդու օրգանիզմ, որը սպառել է այդ սնունդը կամ հեղուկը:



2. Բարձր խտության պոլիէթիլեն (ԲԽՊԷ / ՍՅՈՍ / PEHD կամ HDPE)

Մակնշվում է 2 թվանշանով:

- Օգտագործվում է շամպունների շշերի, տոպրակների, խաղալիքների և սննդի ամուր տարաների արտադրությունում:
- Դրանից պատրաստվում են նաև կենցաղային քիմիական նյութերի տարբեր տարաներ, կափարիչներ և փաթեթանյութեր:

Վտանգները. Համարվում է հարաբերականորեն անվտանգ, սակայն որոշ պայմաններում կարող է արտազատել ֆորմալդեհիդ:

Առողջական խնդիրներ. Ֆորմալդեհիդը վնասում է նյարդային, վերարտադրողական և շնչառական համակարգերը:



3. Պոլիվինիլքլորիդ (ՊՎԲ / ՊՅՄ / PVC)

Մականշվում է 3 թվանշանով:

Պիտանի չէ սննդամթերքի պահպանման համար:

- Կիրառման հիմնական ոլորտը լվացող միջոցների և այլ կենցաղային քիմիական նյութերի տարաների արտադրությունն է:
- Այն օգտագործվում է պատուհանների շրջանակներ պատրաստելու, դեղահաբեր ու կոսմետիկա փաթեթավորելու համար:



Վտանգները. Պարունակում է բիսֆենոլ Ա, վինիլքլորիդ, ֆթալատներ, երբեմն՝ սնդիկ (Hg) և կադմիում (Cd):


Շատ վտանգավոր է այս նյութից պատրաստված արտադրանքների այրումը, քանի որ արտանետվում են դիօքսիններ:

Առողջական խնդիրներ. Դիօքսինը քաղցկեղածին նյութ է: Վնասում է իմունային, հորմոնային և վերարտադրողական համակարգերը:

4. Ցածր խտության պոլիէթիլեն (ՑԽԷ / ՊՅՊՊ / LDPE կամ PELD)

Մականշվում է 4 թվանշանով:

Այս նյութը բոլոր պլաստմասսաների մեջ ամենաապահովն է, չնայած այն չի օգտագործվում սննդամթերքի համար: Օգտագործվում է պոլիէթիլենային տոպրակների, աղբի տոպրակների, սննդային թաղանթների արտադրությունում:



Վտանգները. Կարող է արտազատել ֆորմալդեհիդ:

Առողջական խնդիրներ. Ֆորմալդեհիդը վնասում է նյարդային, վերարտադրողական և շնչառական համակարգերը:

5. Պոլիպրոպիլեն (ՊՊ / ՊՊ / PP)

Մականշվում է 5 թվանշանով:

Համարվում է անվտանգ նյութ սննդամթերքի համար:

- Օգտագործվում է մանկական սննդի պահպանման տարաների, սննդային տարաների, հյութերի համար նախատեսված ձողիկների, յոգուրտի և թթվասերի տարաների արտադրությունում:



Վտանգները. ՊՊ-ն ջերմակայուն է, սակայն բարձր ջերմաստիճաններում արտազատում է ֆորմալդեհիդ: Չի կարելի օգտագործել ալկոհոլային և գազավորված ըմպելիքների համար:

Առողջական խնդիրներ. Այս պլաստմասսայից պատրաստված սպասքի հաճախակի օգտագործումը կարող է վնասել երիկամներին, քանի որ պոլիպրոպիլենը կարող է արտազատել ֆենոլ:



6. Պոլիստիրոլ (ՊՍ / ՊՇ / PS)

Մականշվում է 6 թվանշանով:

Գոյություն ունի պոլիստիրոլի երկու տեսակ՝ փրփուր և սովորական:

Օգտագործվում է սննդի տարաների, մսի և ձվի տուփերի և սառը ըմպելիքների տարաների արտադրությունում:

Վտանգները. Չնայած լայն կիրառմանը՝ վտանգավոր է սննդամթերքի համար: Տաքացման, կրկնակի օգտագործման կամ որոշ սննդային նյութերի հետ շփման ժամանակ արտազատում է թունավոր ստիրոլ:

Առողջական խնդիրներ. Ստիրոլը վնասում է լյարդը, երիկամները, նյարդային և արյունատար համակարգերը:

7. Այլ տեսակներ (OTHER)

Մականշվում է 7 թվանշանով:

Այս նյութը չի պատկանում վերը նշվածներից ոչ մեկին և տարբեր պոլիմերների խառնուրդ է: Այս խումբը ներառում է ինչպես անվտանգ, այնպես էլ վնասակար պլաստմասսաներ: Յոթերորդ խմբում ամենից հաճախ հանդիպում է պոլիկարբոնատը:

Այն օգտագործվում է պանրի, սուրճի և կենդանիների կերերի փաթեթներ պատրաստելու համար: Հիմնականում կիրառվում է մանկական շշերի, մեկանգամյա սպասքի, բժշկական սարքավորումների, ակնոցների ապակիների, էլեկտրոնիկայի և ավտոմեքենաների արտադրությունում: Այն նույնպես կարող է պարունակել բիսֆենոլ Ա:



Վտանգները. Որոշ պոլիմերներ կարող են պարունակել բիսֆենոլ Ա, որը վտանգավոր նյութ է մարդկանց համար:

Բիսֆենոլ Ա-ն սինթետիկ քիմիական նյութ է, որն օգտագործվում է պոլիկարբոնատային պլաստմասսաների և էպօքսիդային խեժերի արտադրությունում: Այն կարելի է գտնել սննդի տարաներում, ջրի շշերում, պահածոյատուիների ներքին ծածկույթներում և նույնիսկ կտրոններում (ջերմային թուղթ):

Բիսֆենոլ Ա-ն արտազատվում է՝

- պլաստմասսե տարայով սնունդը տաքացնելիս (օրինակ՝ միկրոալիքային վառարանում),
- տարայի վնասվածքի կամ քերծվածքի ժամանակ,
- սննդի կամ հեղուկների, հատկապես ճարպոտ կամ տաք հեղուկների հետ շփման միջոցով:


Առողջական խնդիրներ. Բիսֆենոլ Ա-ն էնդոկրին խաթարիչ է. այն նմանակում է կանացի սեռական հորմոնին՝ էստրոգենին՝ խաթարելով հորմոնային համակարգի գործառույթը:



Օրգանային համակարգ	Հնարավոր հետևանքներ
Հորմոնային համակարգ	Հորմոնային անհավասարակշռություն, տեստոստերոնի և էստրոգենի մակարդակի նվազում
Վերարտադրողական համակարգ	Անպտղություն, դաշտանային ցիկլի խանգարումներ, պտղի սեռական օրգանների զարգացման խանգարում
Նյարդային համակարգ	Աճող անհանգստություն, հիշողության խանգարում, վարքագծային խնդիրներ (հատկապես երեխաների մոտ)
Իմունային համակարգ	Իմունային պատասխանի ընկճում, բորբոքային գործընթացների ռիսկի ավելացում
Էնդոկրին հիվանդություններ	2-րդ տիպի շաքարային դիաբետի, գիրության, ձվարանների պոլիկիստոզի համախտանիշի ռիսկ
Օնկոլոգիական ռիսկեր	Հետազոտությունները կապ են հայտնաբերել կրծքագեղձի, շագանակագեղձի քաղցկեղների և այլ ուռուցքների զարգացման հետ


Առավել խոցելի խմբերն են՝

- հղի կանայք և պտուղները՝ առկա է ներարգանդային զարգացման խանգարումների ռիսկ,
- մանկահասակ երեխաները՝ առկա է բարձր զգայունություն բիսֆենոլ Ա-ի նույնիսկ փոքր չափաքանակների նկատմամբ:



Ինչպես խուսափել բիսֆենոլ Ա -ի ազդեցությունից

- Օգտագործել «BPA-free» (բիսֆենոլ Ա-ից ազատ) մականշմամբ տարաներ
- Չտաքացնել պլաստմասսե տարայով սնունդը միկրոալիքային վառարանում
- Նախընտրել ապակուց, կերամիկայից կամ չժանգոտվող մետաղից պատրաստված սպասքը
- Չպահել ջուր կամ հեղուկներ էժան պլաստմասսե շշերում, հատկապես արևի տակ
- Կրկնակի օգտագործումը խստիվ արգելվում է:



Եզրակացություններ

1. Սննդամթերքի պահպանման համար օգտագործեք միայն 2 (ԲԽՊԷ) և 5 (ՊՊ) համարներով պլաստմասսե արտադրանքներ:
2. Այլ պլաստմասսե արտադրանքները սննդի համար մի օգտագործեք:
3. Մի օգտագործեք կրկնակի անգամ ՊԷՏ շշերը և մի տաքացրեք սնունդն այն տարաներում, որոնցով այն վաճառվել է:
4. Մի գնեք հանքային ջուր պլաստմասսե տարաներով, որոնք երկար ժամանակ արևի տակ են գտնվել: Լավագույն ընտրությունն՝ ապակյա, ճենապակյա կամ չժանգոտվող մետաղից պատրաստված սպասքը կամ տարաներն են:
5. Եթե փաթեթավորման վրա նշում չկա՝ հրաժարվեք գնում կատարելուց:

Ազատվեք պլաստմասսե վնասակար արտադրանքներից:

Հաջողություն Ձեզ առողջ և անվտանգ միջավայր ստեղծելու գործում:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ HEJ-Support միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվող «Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում պլաստմասսե թափոնների կանխարգելման, նվազագույնի հասցնելու և վերամշակելու տարբերակների մասին տեղեկատվական-լուսավորչական աշխատանք և իրազեկության բարձրացում» պլաստմասսայով աղտոտվածությունը և դրա ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա նվազագույնի հասցնելու համար» ծրագրի շրջանակում: